Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ռ.Ալավերդյան

Digitally signed by ALAVERDYAN RUZANNA 6312590143
Date: 2023.09.19 13:56:11 AMT

Գ.Էմինի անվան N 182 ավագ դպրոցի

ՏՆՕՐԵՆԻ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ

2023 - 2024 ուստարվա աշխատանքային պլան

Created by Universal Document Converter

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարող	լրացուցիչ նշումներ
1.	**Մ/մ-ների նախագահների** հետ անցկացնել խորհրդակցություն, որի ընթացքում ծանոթացնել առարկայական մասնախմբերի կանոնադրությանը , կրթական ոլորտի նորություններին, հաղորդակից դարձնել մանկավարժության և մասնագիտական նորագույն նվաճումներին, պլանավորել մ/մ-ի աշխատանքային տարեկան գործունեությունը: Հանձնարարել՝ Առարկայական մասնախմբերում. ա/ քննարկել 2022-2023 ուստարում կատարված աշխատանքները և կազմել նոր ուստարվա աշխատանքային պլանը, որից հետո այն ներկայացնել հաստատման բ/ քննարկել և մշակել մեթոդներ, հնարներ և ռազմավարություններ (առկա և հեռավար) դասերի ժամանակ գ/ 2023-2024 ուստարվա ուսպլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի վերաբերյալ առարկայական մասնախմբերում կազմակերպել քննարկումներ, այնուհետև ժամաքանակի տնօրինման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ մանկխորհրդի նիստում դ/ կազմակերպել քննարկումներ 2023-2024 ուստարվա ընթացքում բանավոր հարցումների, գործնական և թեմատիկ աշխատանքների նվազագույն թվաքանակի վերաբերյալ՝ առաջնորդվելով ԿԳՄՍ Նախարարության կողմից հաստատված ուսումնական առարկաների ծրագրերով, գնահատման մեթոդաբանությամբ և մեթոդական ցուցումներով	օգոստոսի 22-31	տնօրենություն, առարկայական մ/մ նախ.	

Created by Universal Document Converter

	ե/ ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները և ներկայացնել հաստատման			
2.	**Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ**, լսել առարկայական մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին ամենամսյա նիստերի ժամանակ:	յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
3.	**Անցկացնել առարկայական մ/մ-ների նիստեր,** ամփոփել յուրաքանչյուր ամսվա կատարած աշխատանքները, քննարկել կատարված դասալսումները, վերանայել հաջորդ ամսվա պլանավորած աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ, տալ հանձնարարականներ:	յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
4.	**Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին**,այն հարստացնել մեթոդական,մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:	օգոստոս սեպտեմբեր	տնօրենություն, գրադարանավար	
5.	**Կազմակերպել մեթոդական աջակցություն ուսուցիչներին՝** ա/ ինքնակրթության և ինքնազարգացման հարցերում, բ/ դասավանդման մեթոդների կիրառման հարցերում գ/ մանկավարժական գերծընթացում՝ որպես նրա կազմակերպչամեթոդական գործիքներ, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերում	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
6.	**Կատարել նպատակային դասալսումներ . թեմատիկ և համալիր դասալսումներ 10-12-րդ դասարաններում՝** ա/ որոշելու ուսուցչի դասավանդման թույլ և ուժեղ կողմերը, պարզելու ուսումնադաստիարակչական գործընթացում ունեցած թերությունների իրական պատճառները (եթե դրանք առկա են), որից հետո տալ համապատասխան ցուցումներ , օժանդակություն և խորհուրդներ մանկավարժական վարպետության կատարելագործման, դասավանդման հմտությունների ուղղությամբ	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ., ուսուցիչներ	

Created by Universal Document Converter

	բ/ պարզելու , թե պահպանվում են արդյոք տարբեր ուսուցիչների կողմից սովորողներին ներկայացվող միասնական պահանջները, գնահատվում են սովորողների աշխատունակությունն ու ակտիվությունը տարբեր ուսուցիչների դասավանդած դասերի ընթացքում գ/ դիտարկելու սովորողների մոտ ձևավորված գիտելիքները, հմտությունները , դիրքորոշումը, արժեքային մոտեցումները և մասնակցությունը ուսումնական գործընթացին Դասալսումները նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման գրանցամատյանում գրելով անհրաժեշտ դիտողություն-հանձնարարություններ:			
7.	**Ապահովել ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտակենտրոն մոտեցումը՝** ուսուցման արդիական մեթոդների կիրառմամբ:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ. ուսուցիչներ	
8.	**Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին**: նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն. տանել աշխատանք առարկայական պատրաստվածության և ինքնակրթության ապահովման ուղղությամբ	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
9.	**Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորանոց սանդղակի կիրառումը**: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր (հարցաշարերի բանկ) և հաճախ 10 -12-րդ դասարաններում սովորողների գիտելիքները ստուգել նաև համակարգչի միջոցով:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ., ուսուցիչներ	
10.	**Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով**	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
11.	**Հետևել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուստարվա**	ուստարվա	տն. ուս. աշխ.	

Created by Universal Document Converter

	ընթացքում հանդես գա մեկ - երկու առարկայական ուսուցման, այնպես էլ մեթոդամանկավարժական բնույթի զեկուցմամբ: Այն քննարկել առարկայական մ/մ-ների նիստերի ընթացքում:	ընթացքում՝ յուր. ամսվա վերջին շաբաթվա ընթացքում	գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
12.	**Կազմակերպել նպատակաուղղված ուսուցում** սովորողների մասնագիտական կողմնորոշման և թե կրթությունը շարունակելու առումով:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
13.	**Ուսուցիչներին ընդգրկել կրթական բարեփոխումների բոլոր վերապատրաստումներին**, դասավանդման նոր տեխնոլոգիաների և համակարգչային գրագիտության դասընթացներին: Հետագայում հետևել դրանց կիրառմանը ուսումնական գործընթացում:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
14.	**Որակավորման բարձրացման նպատակով պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների ցուցակի հստակեցում** և ներկայացում վերապատրաստման դասընթացներին:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
15.	**Ուսումնասիրել այլ ուսումնական հաստատությունների (ինչպես նաև այլ երկրների հանրակրթական հաստատությունների) մանկավարժական առաջավոր փորձը և այն ընդհանրացնել դպրոցում**: Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
16.	**Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ ԿԳՄՍ Նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին:**	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
17.	**Յուրաքանչյուր առարկայական մ/մ-ից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը (ներքին**	ուստարվա ընթացքում	տնօրենություն մ/մ նախ.	

Created by Universal Document Converter

	անհատական դասավանդման վերահսկողություն). արդյունքները քննարկել տնօրենության նիստում կամ առարկայական մ/մ-ների նիստերում՝տալով համապատասխան գնահատական:			
18.	**Վերահսկողություն սահմանել ԱՈՒՊ-ների կատարման ուղղությամբ՝ հիմք ընդունելով հետևյալ կարգախոսը.** **ԱՊՐԵԼ ՄԻԱՍԻՆ, ՍՈՎՈՐԵԼ ՄԻԱՍԻՆ** Իրականացնել ներառական կրթություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար՝ նրանց զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու, մյուս սովորողների հետ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություն ընձեռելու նպատակով:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ.	

Created by Universal Document Converter

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	Լրացուցիչ նշումներ
1.	Դպրոցի տնօրենի հրամանով ավագ դպրոցում սովորողների ընդունելություն իրականացնելու համար (հասարակական հիմունքներով) ստեղծել հաստատությունում աշխատող մանկավարժների խորհրդատվական խումբ	հուլիս	տնօրենություն	
2.	Իրականացնել 10-րդ դասարանցիների ընդունելություն և կոմպլեկտավորել ավագ դպրոցի հոսքային դասարանները	հուլիսից օգոստոսի վերջ	տնօրենություն	
3.	Ծանոթացնել տասներորդցիներին դպրոցի ներքին կարգապահական կանոնների, գործող ռեժիմի, ինչպես նաև իրենց իրավունքների ու պարտականությունների հետ	սեպտեմբերի 1	տնօրենություն, դասղեկներ	
4.	Կազմել դասացուցակ (1-ին և 2-րդ կիսամյակների)	օգոստոս, հունվար	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
5.	Կազմել տարիֆիկացիան	սեպտեմբերի սկիզբ	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
6.	Հրավիրել առարկայական մասնախմբերի ղեկավարների հետ սեմինար խորհրդակցություն. Մասնախմբերի ղեկավարներին ծանոթացնել մասնա - խմբերի կանոնադրությանը, ծանոթացնել ուսումնական ծրագրերի, դասագրքերի վերջին փոփոխություններին: **Հանձնարարել՝** ա/ առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման : բ/ ներկայացնել 2023-2024 ուստարվա ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ	օգոստոսի 22-31	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղ., մասնախմբեր	

Created by Universal Document Converter

	առաջարկություններ գ/ ստուգել մասնախմբերի նախագահների հետ ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները դ/ ներկայացնել միավորային գնահատման բաղադրիչների՝ բանավոր հարցման, գործնական և գրավոր աշխատանքների նվազագույն քանակն ըստ առարկաների, դասարանների և հատկացված շաբաթական ժամաքանակի ե/ առարկայական մասնախմբերում քննարկել այլընտ-րանքային դասագրքերի հարցը և կայացնել համապատաս-խան որոշումներ			
7.	Հաստատել ուսուցիչների թեմատիկ և օրացուցային պլանները	օգոստոսի վերջ	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղ.	
8.	Քննարկել և մշակել առարկայական մ/մ-ների տարեկան աշխատանքային պլանները	օգոստոսի 22-31	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղ.	
9.	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն. ա/ լսել մասնախմբերի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ բ/ քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հարցեր:	ամեն ամսվա վերջին	տն. ուս. աշխ. գծով տեղ., մասնախմբեր	
10.	Կազմել դպրոցի տվյալ ուստարվա ուսումնական պլան	օգոստոսի վերջ	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղ.	
11.	Կազմել ուսուցիչների աշխատաժամանակը՝ ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից ըստ կողմնորոշիչ աղյուսակի ու դասացուցակի ընձեռած հնարավորության	օգոստոս հունվար	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
12.	Նոր ձևավորված 10-րդ դասարաններում անցկացնել	սեպտեմբերի 2-րդ	տն. ուս. աշխ. գծով	

Created by Universal Document Converter

	հայոց լեզվից հայտորոշիչ գրավոր աշխատանք և արդյունքները քննարկել մասնախմբի նիստի և տնօրենին կից խորհրդակցության ժամանակ	կես	տեղ., հ.լ. և հայ գրակ. մասնախումբ	
13.	Պարբերաբար վերահսկողություն սահմանել. ● պլանավորված աշխատանքների կատարման ● էլեկտրոնային դասամատյաններում (ըստ ԿԳՄՍ Նախարարության պահանջի՝ ներբեռնված Word կամ PDF) կատարված գրանցումների նկատմամբ	յուրաքանչյուր ամիս	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
14.	Բուժքրոջ միջոցով պարզել սովորողների առողջական վիճակը	ուստարվա ընթացքում	բուժքույր, դասղեկներ	
15.	Ուստարվա սկզբից կատարել ուսուցիչների բացակայությունների հաշվառում և պարբերաբար գրանցել ուսուցիչների բաց թողած դասաժամերը համապատասխան մատյանում	յուրաքանչյուր ամիս	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
16.	Մեթոդամանկավարժական օգնություն սկսնակ և երիտասարդ ուսուցիչներին (ներքին անհատական դասավանդման վերահսկողություն). ա/ Կատարել դասալսումներ և քննարկումներ բ/ Տալ մեթոդական ցուցումներ դասին ուսուցման նորարար մեթոդների, հնարների և միջոցների կիրառման վերաբերյալ	պարբերաբար	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
17.	Կազմակերպել առարկայական շաբաթներ, տասնօրյակներ, միամսյակներ.Օրինակ՝ **1) Բնագիտական և ֆիզկուլտուրա առարկաների մասնախումբ՝** - կենսաբանություն առարկայի դրվածքի ուսումնասիրություն - ֆիզիկայի և քիմիայի դրվածքի ուսումնասիրություն - ֆիզկուլտուրա և աշխարհագրություն առարկաների դրվածքի ուսումնասիրություն **2) Հասարակագիտական և ՆԶՊ առարկաների մասնախումբ՝** - պատմություն առարկայի դրվածքի	հոկտեմբերի 2-12 հոկտեմբերի 13-20	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	

Created by Universal Document Converter

	ուսումնասիրություն - ՆՁՊ առարկայի դրվածքի ուսումնասիրություն **3) Մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների մասնախումբ՝** - մաթեմատիկա առարկայի դրվածքի ուսումնասիրություն - ինֆորմատիկա առարկայի դրվածքի ուսումնասիրություն **4) Օտար լեզուների մասնախումբ՝** - ռուսաց լեզվի դրվածքի ուսումնասիրություն - անգլերեն լեզվի դրվածքի ուսումնասիրություն **5) Հայոց լ. և հայ գրականության մասնախումբ՝** **ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ ..... 2-րդ կիսամյակում**	 նոյեմբերի 1-10 նոյեմբերի 13-24 նոյեմբերի 27-դեկտեմբերի 8 փետրվար-ապրիլ		
18.	Սահմանված կարգով կատարել ներքին վերահսկողություն 10 -12-րդ դասարաններում, այդ նպատակով առարկայական մ/մ-ների նախագահների պատասխանատվությամբ իրականացնել առարկայական դրվածքների ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մ/մ-ների նիստերում, տնօրենության խորհրդակցություններում, մանկխորհում. **ա/ համալիր դասալսումներ 10-րդ դասարաններում `** պարզելու , թե պահպանվում են արդյոք տարբեր ուսուցիչների կողմից սովորողներին ներկայացվող միասնական պահանջները, գնահատվում են սովորողների աշխատունակությունն ու ակտիվությունը տարբեր ուսուցիչների դասավանդած դասերի ընթացքում: **բ/ թեմատիկ դասալսումներ 11-12-րդ դասարաններում՝** որոշելու ուսուցչի դասավանդման թույլ և ուժեղ կողմերը, պարզելու ուսումնադաստիարակչական գործընթացում ունեցած որոշակի անհաջողությունների իրական	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	

Created by Universal Document Converter

	պատճառները (եթե դրանք առկա են), որից հետո տալ խորհուրդներ մանկավարժական վարպետության կատարելագործման ուղղությամբ **գ/ դասալսումներ 10 -12-րդ դասարաններում**՝դիտարկելու սովորողների մոտ ձևավորված գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը, արժեքային մոտեցումները և մասնակցությունը ուսումնական գործընթացին (դասավանդվող առարկաների որակի բարձրացման նպատակով) Դասալսումները նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման գրանցամատյանում գրելով անհրաժեշտ դիտողություն-հանձնարարություններ: **դ/ Հետազոտական աշխատանքների կազմակերպում տարբեր առարկաների շրջանակներում՝ նախապես ընտ-** **րելով թեման կամ թեմաները** Նպատակը՝ սովորողների մեջ սերմանել հետաքրքրություն տվյալ առարկայի հանդեպ, ձևավորել հետազոտական ինքնուրույն աշխատանք տանելու հմ-տություններ և կարողություններ			
19.	Յուրաքանչյուր ամիս ներքին վերահսկողություն սահմանել նախապես ընտրված դասարանում կամ դասարաններում, այդ իսկ նպատակով առարկայական մ/մ նախագահների օգնությամբ այդ դասարաններում. ուսումնասիրել ուսպլանով նախատեսված առարկաների դրվածքը: Կազմակերպել դասալսումներ:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
20.	Վերահսկել օրվա պլանները	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
21.	Անընդմեջ վերահսկել ուսուցիչների մասնագիտական և մեթոդական մակարդակը , ապահովել նրանց	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ.,	

Created by Universal Document Converter

	ստեղծագործական աշխատանքի համար պայմաններ. ա/ կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն, տալ մեթոդական ցուցումներ դասին ուսուցման ակտիվ մեթոդների, հնարների և միջոցների կիրառման վերաբերյալ: Այդ նպատակով տարբեր առարկայական ուսուցիչներին առաջադրել նախապես ընտրված, մշակված հնարավոր նորարար մեթոդներ՝ դրանք դասապրոցեսում կիրառելու համար: Դասի ավարտից հետո քննարկել ուսուցչի հետ և տալ համապատասխան ցուցումներ բ/ հանձնարարել, վերահսկել և օժանդակել կազմակերպելու և անցկացնելու բաց դասեր, քննարկումներ, կլոր սեղաններ, վիկտորինաներ անվանի անձանց հոբելյանների առիթով		առարկայական մ/մ նախ.	
22.	Սահմանել ծրագրերի որակական և քանակական կատարման վերահսկողություն. - ուսումնասիրել և տարածել մանկավարժական առկա և հեռավար առաջավոր փորձը՝ օգտվելով կրթական պաշարներից - կազմակերպել մասնագիտական և մեթոդական խորհրդատվություններ	կիս.-ի ընթացքում 2 անգամ	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
23.	Դպրոցի դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ծանոթանալու նպատակով թեմատիկ գրավոր աշխատանքների անցկացում տարբեր առարկաներից : Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել մասնախմբերում: Անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ	նոյեմբեր, ապրիլ	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
24.	Բացահայտել չառաջադիմող և ցածր առաջադիմությամբ սովորողներին: Հետևողական ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները, դրանք պարբերաբար քննարկել մասնախմբերի և մանկավարժական խորհրդի նիստերում:	հոկտեմբեր-մարտ	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ. դասղեկներ	
25.	Վերահսկողություն սահմանել սովորողների հաճախումների, պարբերաբար ուշացողների և անհարգելի	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ	

Created by Universal Document Converter

	բացակայողների նկատմամբ			
26.	Առարկայական մ/մ-ների նախագահների օգնությամբ ստուգել նախատեսված լաբորատոր, գործնական, թեմատիկ (քանակը և որակը) , կիսամյակային ամփոփիչ աշխատանքների կատարման վիճակը տարբեր առարկաներից	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ.	
27.	Նախապատրաստել և անցկացնել դպրոցական առարկայական օլիմպիադաներ , ամփոփել և քննարկել դրանց արդյունքները մանկխորհում, մասնախմբերում / առարկայական օլիմպիադաներին նախապատրաստվել ուսումնական տարվա սկզբից, ստեղծել օլիմպիական թիմեր/	հոկտեմբեր-նոյեմբեր	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ.	
28.	Հայտնաբերել օժտված երեխաների / նրանց տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ /	հոկտեմբեր	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ.	
29.	Ամփոփել յուրաքանչյուր կիսամյակի վերջում սովորողների առաջադիմությունը և շարժը	դեկտեմբեր, մայիս	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ.	
30.	Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստում	դեկտեմբեր, մայիս	տն. ուս. աշխ. գծով տեղ., առարկայական մ/մ նախ.	
31.	Աջակցել ԱՈՒՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների , մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ., մ/մ նախ., ուսուցիչներ	
32.	Մասնակցել ծնողական ժողովներին, աշակերտական խորհրդի նիստերին ու միջոցառումներին, դրանցում հանդես գալ ուսումնադաստիարակչական բնույթի հարցերի պարզաբանմամբ:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղ.,	
33.	Կազմակերպել աշխատանք հետ մնացող սովորողների հետ	ուստարվա	տն. ուս. աշխ. գծով	

Created by Universal Document Converter

		ընթացքում	տեղ., մ/մ նախ., ուսուցիչներ	
34.	Կազմակերպել սովորողներին քննությունների նախապատրաստելու համար խորհրդատվական պարապմունքներ	դեկտեմբեր, մայիս-հունիս	տնօրենություն	
35.	Ժամանակին կազմել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ	դեկտեմբեր, մայիս-հունիս	տնօրենություն	
36.	Նախապատրաստել և անցկացնել ավարտական և փոխադրական քննություններ	մայիս-հունիս	տնօրենություն	
37.	Կատարել ներքին գնահատում. - Նախորդ ուստարվա ուսումնադաստիարակչական գործունեության հիման վրա	տարեվերջ	տն. ուս. աշխ. գծով տեղ.	
38.	Ամփոփել առաջին, երկրորդ կիսամյակների և տարեկան աշխատանքները	դեկտեմբեր, մայիս	տնօրենություն	

Created by Universal Document Converter